# ԴԵՊԻ ԼՈՒՅՍ

ՆՈՎԱ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐԻ ԱՆՍԱՄԲԼ

ՆԱՐԵԿԱՑԻ
ԱՐՎԵՍՏԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ





# TOWARDS THE LIGHT

# ԴԵՊԻ ԼՈՒՅՍ

«Նարեկացի» արվեստի միությունը, իր առաքելությունը մի «ծիածանե կամուրջ» է, որը հաղորդակցվողների սրտերը կապում է միմյանց, և հայացքներն ուղղում դեպի վեր, դեպի լույս:

Նկատի ունենք Միության ոգեղեն գործունեությունը, որն ահա 18 տարի է, ինչ այն ծավալել է Հայրենիքում: Այդ են վկայում նաև Միությունում գործող «Նովա» ժողովրդական նվագարանների անսամբլը, «Նարեկացի» ժողովրդական նվագարանների նվագախումբը, «Քնար» հոգևոր և ժողովրդական երգերի խումբը, գեղանկարչական դասընթացները, արվեստին, պոեզիային նվիրված դասախոսությունները, գրահրատարակչական գործունեությունը, շնորհանդեսները և այլ մշակութային միջոցառումները: Եվ նշված «ծիածանի» մի շողը «Նովա» անսամբլն է, որի անդրանիկ ձայնասկավառակը ներկայացվում է հանրությանը:

Անսամբլի բազմաժանր ծրագիրն ունի հարուստ ներկապնակ և լայն շառավիղ: Այն ընդգրկում է Գրիգոր Նարեկացուց մինչև Կոմիտաս, Առնո Բաբաջանյան, Խաչատուր Ավետիսյան, Ռոբերտ Պետրոսյան, Խաչատուր Ներսիսյան, Ծովինար Հովհաննիսյան, Մանվել Բեգլարյան, Կոմիտաս Քեշիշյան:

Բացի հեղինակային գործերից, ծրագրում տեղ են գտել նաև փոխադրություններ, մշակումներ և գործիքավորումներ, որոնք իրականացրել են Արմեն Մանդակունյանը, Հովիկ Սահակյանը,

Գրիգոր Առաքելյանը, Անդրանիկ Ներսիսյանը, Անահիտ Հարությունյանը: Ըստ ժանրերի, ներկայացված են հոգևոր, ժողովրդական երգերի և պարեղանակների մշակումներ:

Հոգևոր երգերն են «Հաւուն, հաւուն»-ը, «Սուրբ, սուրբ»-ը, ժողովրդական նմուշներն են «Դլե յաման», «Քելեր, ցոլեր», «Հոդալլո ջան» երգերը: Պարեղանակներն են «Հետ ու առաջ»-ը, «Շիրակի շուրջպար»-ը, «Շուշան»-ը: Իսկ Ալ. Սպենդիարյանի «Պարսկական քայլերգը» և Էդ. Հովհաննիսյանի «Սարդարապատ» երգը ցույց են տալիս, թե ինչպիսի լայն հնարավորություններ ունի ժողովրդական նվագարանների անսամբլը:

Երիտասարդներից կազմված «Նովա» անսամբլի ձայնասկավառակը լույս է տեսնում ճիշտ ժամանակին, քանի որ մեր օրերում սաստկանում է մշակութային պատերազմը, որը համահարթեցնում է, փոշիացնում ազգային արժեքներն ու ավանդույթները: Մինչդեռ «Նովայի» երաժշտությունը ոչ միայն ճառագում է սեր, հավատ, այն մեծապես նպաստում է ազգային ինքնության պայծառացմանը և դիմում գալիքին, արձագանքում «Սարդարապատի» զանգերին.

Զանգե՛ր, ղողանջե՛ք,
Սրբազան քաջերին կանչե՛ք
Այս արդար պատից:
Սերունդնե՛ր, դուք ձեզ ճանաչե՛ք
Սարդարապատից:

ԴԱՆԻԵԼ ԵՐԱԺԻՇՏ

Վերջերս ինձ ներկայացրեցին «Նարեկացի» արվեստի միության «Նովա» ազգային նվագարանների անսամբլի ձայնագրությունները: Հաճույքով ունկնդրելուց հետո, եկա այն եզրահանգման, որ գործ ունենք լուրջ, կազմակերպված, ինքնատիպ կոլեկտիվի հետ, որտեղ ներգրավված են պրոֆեսիոնալ, բանիմաց, իրենց գործին նվիրված երիտասարդ երաժիշտ-կատարողներ: Անսամբլի գործունեությանը ծանոթ եմ դեռևս նրա հիմնադիր գեղարվեստական ղեկավար, մշակույթի վաստակավոր գործիչ Հովիկ Սահակյանի ժամանակներից:

Այժմ անսամբլը ղեկավարում է շնորհաշատ երաժիշտ, խմբավար Հելբերտ Ասատրյանը, ով իր հետ նվագախումբ բերեց նոր մոտեցումներ, նոր գույներ և նոր արտահայտչամիջոցներ, որոնք ամբողջությամբ առկա են երիտասարդ, հեռանկարային այս կոլեկտիվում: Նվագախմբում կա անսամբլային ճիշտ զգացողություն, այն է՝ միմյանց լսելու, զգալու և խմբերի միջև անհրաժեշտ հարաբերակցություն ստեղծելու կարևոր գաղափարախոսություն: Խոսքերիս վկայությունն են այս արժեքավոր ձայնագրությունները, որոնք ի պահ են տրվելու գալիք սերունդներին:

Նորայր Դավթյան

Հայաստանի ազգային նվագարանների պետական նվագախմբի
գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր,
ՀՀ վաստակավոր արտիստ, պրոֆեսոր



# ՆԱՐԵԿԱՑԻ ԱՐՎԵՍՏԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

## ՔՈ ԿԱՊԸ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԵՏ

«Նարեկացի» արվեստի միությունը (ՆԱՄ) բարեգործական հիմունքներով գործող և շահույթ չհետապնդող հասարակական կազմակերպություն է: Կրելով սուրբ Գրիգոր Նարեկացու անունը և առաջնորդվելով հոգևորի խորհրդով՝ միությունը կոչված է ծառայելու հայ արվեստին, մշակույթին և հոգևոր արժեքներին: Այս ոգով է հիմնադրվել «Նարեկացի» արվեստի միությունը 2000թ.-ին Նարեկ Հարթունյանի կողմից, իր ավագ եղբոր՝ Սարո Հարթունյանի, Հարկո Ինսենթիվզ ընկերության և իրենց լուսահոգի հոր՝ Կարապետ Հարությունյանի հիմնական աջակցությամբ:

2004 թվականին միությունն իր դռներն է բացել Երևանում:

ՆԱՄ-ում բոլոր միջոցառումները կազմակերպվում են միության կողմից բացառապես անվճար հիմունքներով:

Իր գործունեության ընթացքում ՆԱՄ-ը կազմակերպել է և կյանքի է կոչել մի քանի տասնյակ հատուկ նախագծեր, ամեն տարի իրականացնում է 300-ից ավելի համերգներ, ցուցահանդեսներ, դասախոսություններ, վարպետության դասեր, ֆիլմերի ցուցադրություններ և այլն, լույս է ընծայել բազմաթիվ արժեքավոր հրատարակություններ, համագործակցում է հայ և օտարերկրացի շատ ստեղծագործողների, ինչպես նաև դեսպանատների հետ:

ՆԱՄ-ի հատուկ ուշադրության կենտրոնում են հաշմանդամություն ունեցող մարդիկ, տաղանդավոր երեխաները, մարզերի երիտասարդ արվեստագետները:

«Նարեկացի» արվեստի միության Երևանի կենտրոնում գործում են «Նարեկացի» ժողովրդական նվագարանների նվագախումբը, «Նովա» ժողովրդական նվագարանների անսամբլը, «Քնար» հոգևոր և ժողովրդական երգերի խումբը և միության նկարչության դասարանը:

2006 թվականին «Նարեկացի» արվեստի միությունը հիմնում է իր մասնաճյուղը Շուշիում: Ցավոք, 2020 թվականի 44-օրյա պատերազմից հետո Շուշին կորցրեցինք...

Շուշիի կրթօջախ-կենտրոնում անվճար իրականացվում էին տարբեր ուսուցողական ծրագրեր՝ կիթառի (հեղինակային երգ), գեղանկարչության, փայտափորագրության, մանրանկարչության, ասեղնագործության, լուսանկարչության, կարպետագործության, կավագործության, թատերական, պարի, ասմունքի, երգի, անգլերենի, արտթերապիայի մշտական դասընթացներ, ինչպես նաև բազմաբնույթ միջոցառումներ:

Միության բոլոր միջոցառումների մուտքը միշտ ազատ է:

# ՆՈՎԱ

## ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐԻ ԱՆՍԱՄԲԼ

«Նարեկացի» արվեստի միությունը՝ ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Հովիկ Սահակյանի գեղարվեստական ղեկավարմամբ, 2015 թվականի սեպտեմբերին հիմնադրել է «Նովա» նվագարանների անսամբլը:

2015 թվականից անսամբլի գեղարվեստական ղեկավարը ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Հովիկ Սահակյանն է, 2020 թվականից անսամբլի ղեկավար և դիրիժորն է հանդիսանում Հայաստանի Հանրապետության ազգային նվագարանների պետական նվագախմբի շվիահար Հելերտ Ասատրյանը:

«Նովա» ժողովրդական նվագարանների անսամբլը բաղկացած է 22 երաժիշտներից և 1 երգչից:

Երաժշտախմբում ընդգրկված են հայկական ժողովրդական գործիքներ՝ քանոն, սանթուր, քամանչա, թառ, ուդ, դհոլ, դափ, դուդուկ, շվի, բլուլ, մեծ և փոքր բամբիռներ, քամանի:

Անսամբլի երկացանկում ընդգրկված են ժողովրդական, աշուղական, հոգևոր երաժշտության նմուշներ, մշակումներ, հեղինակային գործեր, փոխադրություններ:

2016 թ.-ին «Նարեկացի» արվեստի միության «Նովա» ժողովրդական նվագարանների անսամբլը՝ գեղարվեստական ղեկավար

Հովիկ Սահակյանի ղեկավարությամբ, իր մասնակցությունն է ցուցաբերել Հայաստանի Հանրապետության անկախության 25-ամյակին նվիրված ժողովրդական նվագարանների անսամբլների առաջին մրցույթ-փառատոնին՝ արժանանալով առաջին մրցանակի:

2018 թ.-ին Երևանի հիմնադրման 2800-ամյակին նվիրված մենահամերգով հանդես է եկել Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը և արժանացել մասնագետների բարձր գնահատականի:

Իր գործունեության ընթացքում անսամբլը բազմաթիվ համերգներով հանդես է եկել Հայաստանի տարբեր քաղաքներում՝ Գավառ, Գյումրի, Վանաձոր, Դիլիջան, Երևան, արժանացել է բազմաթիվ մրցանակների:

«Նովա» ժողովրդական նվագարանների անսամբլի գործունեությունը ուղղված է հայկական մշակույթի պահպանման կարևորագույն գործին:

«Դեպի լույս» ձայնասկավառակը «Նովա» ժողովրդական նվագարանների անսամբլի առաջին ձայնասկավառակն է:

# TOWARDS THE LIGHT

Naregatsi Art Institute, its mission being a "rainbow bridge", binds the hearts of communicants to each other and directs their eyes upwards, towards the light.

We have in mind the spiritual activities of the Institute, which has been carried out in the Motherland for already 18 years. This is evidenced by the Nova Folk Instruments Ensemble and Naregatsi Folk Instruments Orchestra active in the Institute, the Knar Spiritual and Folk Songs Group, painting courses, lectures dedicated to art, poetry, publishing activities, presentations and other cultural events. And one ray of the mentioned "rainbow" is the Nova Ensemble, whose debut CD is being presented to the public.

The Ensemble's multi-genre program is notable for its rich palette and wide range. It includes works from Grigor Narekatsi to Komitas, Arno Babajanyan, Khachatur Avetisyan, Robert Petrosyan, Khachatur Nersisyan, Tsovinar Hovhannisyan, Manvel Beglaryan, Andranik Nersisyan.

In addition to original works, the program also includes transcriptions and arrangements by Armen Mandakunyan,

Hovik Sahakyan, Grigor Arakelian, Anahit Harutyunyan, Komitas Keshishyan and others. Arrangements of spiritual, folk songs and dances are presented by genre.

The spiritual songs are “Havoun- Havoun” (The Bird) , "Sourp-Sourp” (Holy, Holy), folk songs are "Dle Yaman", “Qeler, Tsoler”, "Hodallo jan". The dances are "“Yet u Araj” (Back and Forth), "Shirak round dance", "Shushan". Moreover, Alexander Spendiaryan's "Persian March" and Edgar Hovhannisyan's song "Sardarapat" show the wide possibilities of the Folk Instruments Ensemble.

The CD of the Nova Youth Ensemble is released at the right time, because nowadays the cultural war is intensifying, which is leveling and pulverizing national values and traditions. Meanwhile, the music of the Nova not only radiates love and faith, it greatly contributes to the brightening of national identity and appeals to the future, responding to the bells of "Sardarapat".

Bells start ringing
Call the holy braves from this just wall.
Generations, know about yourselves
from Sardarapat.

Daniel Yerazhisht

Recently, I was given the recordings of the Nova Folk Instruments Ensemble of the Naregatsi Art Institute. After listening with pleasure, I came to the conclusion that this Ensemble is a serious, organized, unique collective with professional, knowledgeable, young musicians-performers dedicated to their work.

I have been familiar with the activities of the Ensemble since the time of its founding Artistic Director, RA Honorary Artist of Culture Hovik Sahakyan. Nowadays, the Ensemble is led by a gifted musician, conductor Helbert Asatryan, who brought with him new approaches, new colors and new means of expression to the Ensemble, which are fully present in this young, forward-looking collective. There is a proper sense of ensemble, that is, an important ideology of listening, feeling each other and creating the necessary correlation between the groups. My words are confirmed by these valuable recordings, which will be preserved for the generations to come.

Norayr Davtyan

Artistic Director and Chief Conductor of the State Orchestra of National Instruments of the Republic of Armenia, Honored Artist of the Republic of Armenia, Professor

# NAREGATSI ART INSTITUTE

## Your Culture Connection

The Naregatsi Art Institute (NAI) is a non-profit organization that was established and currently operates on purely charitable bases. Named after Saint Gregory of Narek, NAI's principle mission is to preserve and promote Armenian art, culture and spiritual values. Naregatsi Art Institute was founded in the year 2000 by Nareg Hartounian and by the generous contributions of Saro Hartounian, their late father Garabed Haroutunian and Harco Incentives Inc.
The Institute opened its doors in Yerevan in 2004.

All activities at NAI are free of charge for both the audience and featured talent.

Since its inception, NAI each year has presented more than 300 concerts, exhibitions, lectures, master classes and film screenings collaborating with a great number of artists from Armenia and abroad and with some embassies as well. As part of its contribution to Armenian culture, NAI has created numerous unique books, CD's and publications exploring various facets of the rich Armenian cultural heritage.

NAI provides a special place for children, emerging artists, artists with disabilities and artists living in the regions of Armenia outside of Yerevan. It also provides space and resources to anyone with something of artistic value to share.

NAI is home to The Naregatsi Orchestra, The Nova Folk Instruments Ensemble, The Knar Spiritual and Folk Song Group and The Painting Class.

In 2006, Naregatsi Art Institute opened its branch in Shoushi. Unfortunately, after the 44-day war of 2020, we lost Shoushi.

The Center in Shoushi provided a variety of free classes in music (including piano, bard songs class, choir), as well as instructions in painting, wood engraving, pottery, photography, theater, puppet theater, dance, recitation, carpet making, English language, art therapy, computer graphics and design. Naregatsi Shoushi also provided its own unique series of presentations and cultural events.

Admission to all events at NAI is always free.

# NOVA

## FOLK INSTRUMENTS ENSEMBLE

The Naregatsi Art Institute founded the Nova Folk Instruments Ensemble in September 2015 under the artistic supervision of the RA Honorary Artist of Culture Hovik Sahakyan.

Since 2015 the Artistic Director of the Ensemble has been the RA Honorary Artist of Culture Hovik Sahakyan. Since 2020, the director and conductor of the Ensemble has been Helbert Asatryan, shvi player of the State Orchestra of National Instruments of the Republic of Armenia.

The Ensemble consists of 22 musicians and 1 vocalist.

The music group includes Armenian folk instruments: qanun, santur, qyamancha, tar, oud, dhol, dap, duduk, shvi, blul, big and small bambirs, qamani.

The repertoire of the Ensemble includes folk music, ballads, spiritual music, arrangements, copyright works, and transcriptions.

In 2016, the Nova Folk Instruments Ensemble (Artistic Director Hovik Sahakyan) of the Naregatsi Art Institute had their active participation in the first Contest-Festival of Folk Instruments Ensembles dedicated to the 25th anniversary of Independence of the Republic of Armenia and was awarded the first prize.

In 2018, the Nova Folk Instruments Ensemble presented a concert in Komitas Chamber Music Hall dedicated to the 2800th anniversary of Yerevan foundation. Their performance was highly appreciated by professionals.

During its activity, the Ensemble performed concerts in different cities of Armenia: Gavar, Gyumri, Vanadzor, Dilijan, Yerevan, and won many awards.

The activities of the Nova Folk Instruments Ensemble are aimed at the most important task of preserving the Armenian culture.

"Towards the Light" is the first CD of the Nova Folk Instruments Ensemble.



## ԴԵՊԻ ԼՈՒՅՍ

### ՆՈՎԱ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐԻ ԱՆՍԱՄԲԼ

Գեղ. ղեկավար՝ ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Հովիկ Սահակյան
Ղեկավար և դիրիժոր՝ Հեյբերտ Ասատրյան

1. Խաչատուր Ավետիսյան - «Էքսպրոմտ»,
քանոնի մենանվագը՝ Մանուշակ Նաղդալյանի

2. Կոմիտաս - Քեշիշյան – «Սուրբ, սուրբ»,
փոխադրումը՝ Ծովինար Հովհաննիսյանի

3. Ալեքսանդր Սպենդիարյան - «Պարսկական քայլերգ»,
գործիքավորումը՝ Հովիկ Սահակյանի

4. Կոմիտաս – «Դլե յաման»,
մշակումը՝ Անդրանիկ Ներսիսյանի

5. Ծովինար Հովհաննիսյան – «Ռապսոդիա թիվ 1»,
գործիքավորումը՝ Հովիկ Սահակյանի

6. Խաչատուր Ավետիսյան – «Հովվերգական»,
բլուլի մենանվագը՝ Րաֆֆի Մկրտչյանի

7. Էդգար Հովհաննիսյան – «Սարդարապատ»,
գործիքավորումը՝ Գրիգոր Առաքելյանի,
մենակատար՝ Արման Առաքելյան

8. «Շիրակի շուրջպար»,
մշակումը՝ Արմեն Մանդակունյանի

9. Կոմիտաս – «Քելեր, ցոլեր»,
մշակումը և գործիքավորումը՝ Հովիկ Սահակյանի

10. Խաչատուր Ներսիսյան - «Շուշան» (պարեղանակ)

11. Գրիգոր Նարեկացի – «Հավուն, հավուն»,
մշակումը և գործիքավորումը ՝ Անդրանիկ Ներսիսյանի

12. Կոմիտաս – «Հոդալըր», «Հետ ու առաջ»,
մշակումը և գործիքավորումը՝ Հովիկ Սահակյանի

13. Առնո Բաբաջանյան - «Չքնաղ երազ»,
փոխադրումը՝ Անահիտ Հարությունյանի,
մենակատար՝ Արման Առաքելյան

14. Ռոբերտ Պետրոսյան – «Դուդուկի ռապսոդիա»,
դուդուկի մենանվագը՝ Անդրանիկ Գասպարյանի

## ԵՐԱԺԻՇՏՆԵՐ

Եվգինե Մելիքյան / քանոն
Սիլվանա Միրիջանյան / քանոն
Մանուշակ Նադղալյան / քանոն
Արևիկ Ներկարարյան / քանոն
Անահիտ Հարությունյան / քանոն
Լուսինե Մանգասարյան / սանթուր
Սվետլանա Փանյան / ուդ
Միլենա Օզանեսովա / ուդ
Արսինե Յայլայան / ուդ
Դավիթ Մելքոնյան / մեծ բամբիռ
Պավել Հովսեփյան / թառ
Սարգիս Սերոբյան / քամանչա

Րաֆֆի Մկրտչյան / բլուլ
Դավիթ Հարությունյան / շվի
Վահե Փափախչյան / թավ շվի
Անդրանիկ Գասպարյան / դուդուկ
Դավիթ Ալիխանյան / դուդուկ
Սերգեյ Դալալյան / դուդուկ
Սարգիս Հարությունյան / դուդուկ
Հասմիկ Կոստանյան / դհոլ
Արման Բագունց / դհոլ, դափ
Էդգար Փաշիկյան / դհոլ
Արման Առաքելյան / երգիչ

## MUSICIANS

Yevgine Melikyan / qanun
Silvana Mirijanyan / qanun
Manushak Naghdalyan / qanun
Arevik Nerkararyan / qanun
Anahit Harutyunyan / qanun
Lusine Mangasaryan / santur
Svetlana Panyan / oud
Milena Oganesova / oud
Arsine Yailayan / oud
Davit Melkonyan / big bambir
Pavel Hovsepyan / tar
Sargis Serobyan / qyamancha

Raffi Mkrtchyan / blul
Davit Harutyunyan / shvi
Vahe Papakhchyan/ tav shvi
Andranik Gasparyan / duduk
Davit Alikhanyan / duduk
Sergey Dalalyan / duduk
Sargis Harutyunyan / duduk
Hasmik Kostanyan / dhol
Arman Bazunts / dhol, dap
Edgar Pashikyan / dhol
Arman Arakelyan / singer

# TOWARDS THE LIGHT

NOVA FOLK INSTRUMENTS ENSEMBLE

Artistic Director: RA Honorary Artist of Culture Hovik Sahakyan
Director & Conductor: Helbert Asatryan

1. Khachatur Avetisyan - "Impromptu", Soloist: Manushak Naghdalyan (qanun)

2. Komitas Keshishyan - "Sourp-Sourp" (Holy, Holy), transcription by Tsovinar Hovhannisyan

3. Alexander Spendiaryan - "Persian March", arrangement by Hovik Sahakyan

4. Komitas – "Dle Yaman", arrangement by Andranik Nersisyan

5. Tsovinar Hovhannisyan - "Rhapsody N1", arrangement by Hovik Sahakyan

6. Khachatur Avetisyan - "Hovvergakan" (Pastoral), Soloist: Raffi Mkrtchyan (blul)

7. Edgar Hovhannisyan – "Sardarapat", arrangement by Grigor Arakelian, Soloist: Arman Arakelyan

8. “Shirak Round Dance”, arrangement by Armen Mandakunyan

9. Komitas – “Qeler, Tsoler”, arrangement by Hovik Sahakyan

10. Khachatur Nersisyan – “Shushan” (dance music)

11. Grigor Narekatsi - “Havoun- Havoun” (The Bird), arrangement by Andranik Nersisyan

12. Komitas – “Hodallo”, “Yet u Araj”, arrangement by Hovik Sahakyan

13. Arno Babajanyan- " Sweet Dream”, transcription by Anahit Harutyunyan, Soloist: Arman Arakelyan

14. Robert Petrosyan – “Duduk Rhapsody”, Soloist: Andranik Gasparyan (duduk)

## ԴԵՊԻ ԼՈՒՅՍ

Հոգևոր, ժողովրդական և հայ կոմպոզիտորների ստեղծագործություններ
«Նովա» ժողովրդական նվագարանների անսամբլ

Նարեկացի Արվեստի Միություն
Երևան, 2022

Գրաֆիկ դիզայներ՝ Լիլիթ Խաչատրյան
Ձայնագրությունը և համադրումը՝ Արթուր Խաչատրյանի

Նախագծի համակարգող՝ Գայանե Խաչատրյան
Թարգմանիչ և սրբագրիչ՝ Մարինե Հարությունյան
Գործադիր պրոդյուսեր՝ Նարեկ Յարութիւնեան

Հատուկ շնորհակալություն
Հայաստանի հանրային ռադիոյին և Արթուր Իսպիրյանին

Ձայնագրությունը՝ Հանրային ռադիոյի «Ռադիո» ստուդիայի

Տարազների ձևավորումը և պատրաստումը
«Տերյան մշակութային կենտրոնի» կողմից

© ® Նարեկացի Արվեստի Միություն, 2022
ISBN  978-9939-9283-5-7

**TOWARDS THE LIGHT**

Spiritual, folk music and works by Armenian composers
Nova Folk Instruments Ensemble

Naregatsi Art Institute
Yerevan, 2022

Graphic Designer: Lilit Khachatryan
Recording, mixing and mastering by Arthur Khachatryan

Project Coordinator: Gayane Khachatryan
Translation and proofreading by Marine Harutyunyan
Executive Producer: Nareg Hartounian

Special thanks to
Public Radio of Armenia and Arthur Ispiryan

Recorded at the Radio Studio of the Public Radio of Armenia

Costumes designed and made by Teryan Cultural Center

© ℗ Naregatsi Art Institute, 2022
ISBN 978-9939-9283-5-7

ԴԵՊԻ ԼՈՒՅՍ

TOWARDS THE LIGHT

www.naregatsi.org

Սկանավորեք QR կոդը՝ երգերը լսելու համար

Scan the QR code to listen to the songs

Nova Ensemble
Naregatsi Art Institute

Naregatsi Art Institute